ԳԱԳԻԿ ԳԱՐՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել եմ 1948թ. մարտի 23-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ներկայիս Գեղաշեն գյուղում:

1970թ. գերազանցությամբ ավարտել եմ Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, այնուհետեւ ուսանել եմ Երեւանի պետական համալսարանի ասպիրանտուրայում:

1973թ. դասախոսական աշխատանքի եմ անցել Երեւանի պետական համալսարանում, 1975 թվականից՝ նոր կազմավորված Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում:

1977-78թթ. գիտական ստաժավորում եմ անցել Բելգրադի համալսարանում (Հարավսլավիա):

1982-1987թթ. աշխատել եմ տնտեսագետ-դասախոս Հայաստանի կոմկուսի Կենտկոմում:

1987թ. նշանակվել եմ կոմկուսի Կենտկոմի սոցիալ-տնտեսագիտական բաժնի վարիչ:

1990թ. ընտրվել եմ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր, նույն թվականին՝ Գերագույն խորհրդի փոխնախագահ:

1991թ. համապետական ընտրությունների արդյունքներով ընտրվել եմ Հայաստանի Հանրապետության փոխնախագահ:

1991թ. նոյեմբերից մինչեւ 1992թ. հուլիսը կատարել եմ նաեւ Հայաստանի Հանրապետության վարչապետի պարտականությունները:

1996թ. փետրվարի 6-ին Ազգային ժողովի կողմից նշանակվել եմ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահ: Պաշտոնավարման ժամկետս լրանում է 2018 թվականի մարտի 23-ին:

1997-2017թթ. ընտրվել եմ Նորանկախ երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների միջազգային կոնֆերանսի նախագահ եւ «Սահմանադրական արդարադատություն» միջազգային հանդեսի խմբագրական խորհրդի նախագահ:

1997 թվականից Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) անդամ եմ: 2014-2017 թվականներին ընտրվել եմ նույն հանձնաժողովի Բյուրոյի անդամ:

1998թ. նոյեմբերից Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության անդամ եմ:

2009-2017թթ. եղել եմ Սահմանադրական արդարադատության համաշխարհային խորհրդաժողովի Բյուրոյի անդամ, 2014-2015թթ.՝ Բյուրոյի նախագահ:

2016 թվականի հոկտեմբերից ընտրվել եմ «Սահմանադրական մշակույթ» միջազգային վերլուծական կենտրոնի հոգաբարձուների խորհրդի նախագահ /հիմնադիրներն են աշխարհի 19 երկրների թվով 45 սահմանադրագետներ/:

Հայաստանի Հանրապետության Նախագահի 1998թ. ապրիլի 23-ի հրամանագրով ինձ շնորհվել է դատավորի բարձրագույն որակավորման դաս:

1999թ. մարտին պաշտպանել եմ դոկտորական ատենախոսություն՝ «Սահմանադրական դատարանը պետական իշխանության համակարգում (համեմատական վերլուծություն)» թեմայով:

Իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր եմ:

Դասախոսություններով հանդես եմ եկել Երևանի պետական համալսարանում /1997 թվականից մինչ այսօր/, Երեւանի Սլավոնական, Ֆրանսիական, Ամերիկյան համալսարաններում, ՀՀ Կառավարման ակադեմիայում, Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում, Կլերմոն Ֆերանի համալսարանում (Ֆրանսիա), Քեմբրիջի համալսարանում (Անգլիա):

Հեղինակ եմ 35 մենագրությունների, ինչպես նաեւ 150-ից ավելի գիտական հրապարակումների (հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)՝ նվիրված տարածաշրջանային զարգացումների, պետական կառավարման, սահմանադրական իրավունքի եւ սահմանադրական արդարադատության հիմնախնդիրներին: Մասնակցել եւ զեկույցներով հանդես եմ եկել 70-ից ավելի միջազգային գիտական եւ գիտագործնական խորհրդաժողովներում՝ սահմանադրական իրավունքի եւ, մասնավորապես, սահմանադրական արդարադատության հիմնախնդիրներին վերաբերող:

Պարգեւատրվել եմ.

Արցախի Հանրապետության Սուրբ Գրիգոր Լուսավորիչ շքանշանով,

Հայաստանի Հանրապետության Տիգրան Մեծի շքանշանով:

Ամուսնացած եմ, ունեմ երեք զավակ, ութ թոռ:

Գ.Գ. Հարությունյան

21.02.2018թ.